

կը ներկայացնէին հոն Հայերը (Յ. Նալբանդեան, Արև, 19 Փետր. 1935), բայց կ'երեւի թէ յետոյ պակասած կամ անհետացած են: Այս պատճառով Ագոնց (էջ 527) կը թերահաւատար ժԸ. դարուն Վենետիկ տպուած ընդարձակ աշխարհագրութեան մը հեղինակին՝ Պէշինկի մէկ տեղեկութեան մասին: Պէշինկ գրած էր թէ Հայերու ձեռքն էր երկիրին վաճառականութիւնը: Ագոնց ասիկա ըսելէ ետք կը յարէ. «բայց այս գուցէ էլիս ի հնումն, քանզի ի մերում ժամանակի ի Հայոց հազիւ ոք երբեք գնաց անդ» և կը հաստատէ թէ «վաճառականութիւն երկրին ընդ մեծի մասին է ի ձեռս Հրեից եւ Արաբացոց»: Ըսելէ թէ 1602ին Հայ գրեթէ չկար հոն. մինչ ժԸ. դարուն հոն Հայերը շատ էին:

Հայ կրօնաւորներու անարգելի երթեւեկին կարկառուն տպացոյցն այն է, որ լարուած տրամագրութիւններ գոյութիւն ունեցած և վեց Ֆրանչիսկեան կրօնաւորներ գլխատուած ժամանակներուն իսկ, այսինքն 1652ին, Հոպէշիստան մուսաք գործեցին Երուսաղէմի նուիրակ Գրիգոր եպիսկոպոսը(1) և 1678ին Յովհաննէս արքեպս. Թիւթիւնճի, Վանի երբեմնի առաջնորդը:

Բայց քանի որ կաթոլիկ կրօնաւորներ Հայոց վայելած այս առանձնացնորհը կը շահագործէին կեղծարարութեամբ, կ'երեւի հոպէշ կղերը միշտ կաս-

(1) Գրիգոր եպիսկոպոսի առաքելութիւնը կը յիշատակեն Մեսրոպ Թաղիադեանց (Պատմութիւն հին Հնդկաստանի, զիբ Գ., զլ. է.) եւ Ասուածասուր եպ. Յովհաննէսեան (Պատմութիւն Երուսաղէմի, Ա. հս., էջ 343)՝ գրելով. «Գրիգոր եպիսկոպոս ոմն Երուսաղէմի շրջեալ քարոզութեամբ յաշխարհ եթովպիա մինչ ի Մուխա եկն անդուստ ի Քոչին (Հնդկաստան) եւ քարոզութեամբ իւրով հաստատեաց զամենեւեան ի դաւանութիւն Հայոց եւ Ասորոց»: